Որպեսզի մեր երկրում աշխուժանա ներդրումային և գործարար ոլորտը, առաջարկում ենք կենսաթոշակային ֆոնդերին հատկացվող միջոցների որոշակի մասը ներդնել նորաստեղծական ոլորտում, որը կօգնի, որպես հեռանկարային և ներուժ ունեցող երկիր, հաստատուն և առաջատար տեղ գրավել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, նաև դրամական միջոցները կշրջանառվեն, ինչն էլ պետությանը կապահովի անհրաժեշտ դրամական հոսքերով (մասնավորապես հարկերի տեսքով)՝ իր կարիքները բավարարելու համար:

МАРИАМ МАТЕВОСЯН

ОБСЛЕДОВАНИЕ НАКОПИТЕЛЬНОГО ПЕНСИОНОГО ФОНДА РА

Ключевые слова: *накопительная пенсионная система, инвестиции, эффективность, фонды, возмещение, управляющие.*

Цель накопительного пенсионого фонда снизить социалную нагрузку государства и обиспечить равнавесие. Главная цель системи правилное и прозрачное управление средств со стороны управляющих фондов которое обеспечит доверие к системе. А так же утвердить обективную связь между пенсией и заработком лица, которое связоно с выбором из дествующих 3 фондов стабильно доходны, консервативный, уравнавещиный.

MARIAM MATEVOSYAN

ANALYSIS ACCUMULATIVE PENSION SYSTEM RA

Key words: *accumulative pension system, investments, efficiency, funds, compensation, management.*

The cumulative pension system aim to alleviate the social burden of the state and ensure balance. The key objective of this system to ensure the proper and transparent management of funds allocated by the managers to the fund, which will ensure the confidence in the system. Also, fix the objective relationship between a person's earnings and pensions, which also depends on which types of funds to choice - stable income, conservative, balanced.

ԱՆՆԱ ՄԱՏԻՆՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ, 2-րդ կուրս

ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. *նորարարական գործունեություն, առաջընթաց, տնտեսական աճ, մրցունակ ազգային ինովացիոն համակարգ*

Հոդվածում նկարագրված է Հայաստանի Հանրապետության ինովացիոն համակարգը: Անդրադարձ է կատարվել գիտատար ոլորտներին, ներկայացվել են բոլոր պայմանները, որոնց առկայության դեպքում ինովացիան կդառնա ՀՀ տնտեսական աճի գործոն: Առաջ են բերվել նաև պատճառները, թե ինչու պետք է շեշտադրումը

կատարվի հենց այդ ճյուղի զարգացման վրա: Կատարվել են եզրակացություններ և առաջարկություններ՝ ոլորտի առաջընթացն ու հետագա զարգացումն ապահովելու համար:

Նորարարական գործունեությունը և ինովացիոն տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում տնտեսական բարգավաճման հիմնական շարժիչ ուժերն են: Դրանք ոչ միայն հնարավորություն են ընձեռում ապահովելու բնակչության կենսամակարդակի բարձրացումը, լուծելու սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրները, այլև երկրների աշխարհաքաղաքական «ռազմական և տնտեսական հզորության ու անկախության կարևորագույն հիմնաքարեր» են: Ինովացիոն գործընթացն իր բնույթով եզակի է և միմյանց է կապում գիտությունը, տեխնիկան, տնտեսությունը, ձեռնարկատիրությունը, կառավարումը[1]:

Ինովացիոն ոլորտում ՀՀ ունեցած դիրքը ներկայացնենք հարևան երկրների համեմատությամբ՝ ըստ Գլոբալ ինովացիոն համաթվի՝ 0-100 սահմաններում և 90% վստահելիության միջակայքում: ՀՀ-ն գտնվում է 59-րդ տեղում (56.63 վստահության միջակայքով), նույն սանդղակի 43-րդ տեղում Թուրքիան է (40.46 վստահության միջակայքով), իսկ Վրաստանը 63-րդն է (միջակայքը՝ 64.70): Ըստ ինովացիաների մուտքագրման համաթվի՝ մենք 82-րդն ենք, Թուրքիան՝ 68-րդը, իսկ Վրաստանը 69-րդը: Ըստ ելքային ենթահամաթվի՝ մեր երկիրը 47-րդ հորիզոնականում է, իսկ ըստ մուտքային ենթահամաթվի՝ 82-րդ:[2]

Հայաստանում արդեն ստեղծվել և գործում են մի շարք մասնավոր ու պետական բիզնես և կրթական կառույցներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով աջակցում են ինովացիոն գործունեությանը և ինովացիոն ընկերություններին (Գյումրու SS կենտրոն, «Վիասֆեր տեխնոպարկ» և այլն): Իրականացվում են նաև մի շարք հանրակրթական ծրագրեր՝ համագործակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների այնպիսի առաջատար ընկերությունների հետ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Էյչ-Փին» և «Ինթելը»:[3] Մեր երկրում ինովացիոն միջավայրի բարելավման համար անհրաժեշտ և կարևոր նախապայման է պետության միջամտությունը: Ընդհանուր առմամբ, կիրառվող կառուցակարգերը կարելի է բաժանել 3 խոշոր խմբերի՝

- առաջինը պետության ուղղակի ֆինանսական մասնակցությունն է՝ որոշակի նախագծերի կամ կազմակերպության ֆինանսավորման տեսքով (օրինակ՝ մասնակցություն վենչուրային ֆինանսավորման մեջ կամ փոքր ինովացիոն ֆիրմաներում),
- երկրորդը արտադրա-տեխնոլոգիական ենթակառուցվածքի տարրերի ստեղծման ֆինանսավորումն է (տեխնոպարկեր, ինկուբատորներ, տեխնոլոգիաների ստեղծման, առաջմղման գրասենյակներ),

---

[1] Տե՛ս Հովասափյան Ա., «Նորարարությունների ներդրման և օգտագործման տնտեսական հիմնախնդիրները առևտրային կազմակերպություններում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսություն, Երևան 2008, էջ 7:

[2] http://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2017.pdf

[3] Տե՛ս Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ: Հաստատված է ՀՀ Կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ:

- հաջորդ կարևոր աջակցությունը գիտահետազոտության ոլորտում պետության և մասնավոր հատվածների միջև կապերի ամրապնդումն է:

Մեր երկրում տնտեսական աճին զուգընթաց տարեկան միջինը 1.14 անգամ ավելանում են ՀՆԱ-ի մեջ գիտությանը տրամադրվող միջոցները: ԱՊՀ երկրների նկատմամբ գիտատեխնիկական ներուժի համեմատական ցուցանիշների դիտարկումից պարզ դարձավ, որ մեր երկրի գիտական կազմակերպությունների քանակը գերազանցում է 72-ը[1], իսկ գիտական աստիճան ունեցող մասնագետների քանակը՝ 1554-ը[2]:

Նորարարական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նպաստավոր ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի առկայությամբ: Հայաստանում նորարարական գործունեության աջակցմանն ուղղված օրենսդրական դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ համապատասխան օրենքները և այլ իրավական փաստաթղթերը, առանձին-առանձին վերցված, բավականին հուսադրող են:[3] Սակայն պատկերը միանգամայն փոխվում է, երբ այս օրենքները փորձ է արվում համատեղել մեկ ընդհանուր տրամաբանության մեջ, հատկապես այն պարագայում, երբ զարգացումները դիտարկում ենք ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման համատեքստում: Իրավական համակարգում կարգավորման առաջին քայլերից մեկը պետք է լինի ինովացիոն կամ նորամուծական գործունեության՝ հարկերից հնարավորինս ազատումը, քանի որ հարկային բեռի ներքո ինովացիոն ծրագրերի իրագործումը ոչ արդյունավետ է այն պարզ պատճառով, որ ինովացիոն նախագծերը սկզբնական շրջանում չեն ծածկում իրենց ծախսերը, իսկ եթե դրան գումարվում են նաև հարկերը, ապա առանց վնասաբերության աշխատելը դառնում է բավականին բարդ:

Հայաստանի Հանրապետության ինովացիոն միջավայրի խթանմանը կարող են ուղղվել հետևյալ միջոցառումները՝

- Իրականացնել գիտահետազոտական ոլորտի նյութատեխնիկական հնարավորությունների և ենթակառուցվածքների առկա վիճակի հաշվառում, վերլուծություն, ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան ու ապահովել դրա հասանելիությունը երկրի հետազոտողներին և գիտական հանրությանը:
- ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում մշակել և իրականացնել նյութատեխնիկական հնարավորությունների արդիականացման ու համալրման ծրագրեր, ապահովել առկա ենթակառուցվածքների հասանելիությունը, նպատակային և արդյունավետ շահագործումը: Մշակել ու կիրառել հատուկ սարքավորումների և տեխնիկայի ձեռք բերման ծրագիր, որի ներքին ռեսուրսների և արտաքին աղբյուրներից հայթայթվող միջոցների հաշվին ֆինանսավորմանը տալ առաջնահերթություն:
- Ինովացիոն խորհուրդներ ստեղծել ՀՀ գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում, ինչպես նաև պետական բարձր մակարդակով՝ Հայաստանի գիտակրթական ու գործարար ոլորտների առաջադեմ, ստեղծարար, փորձառու մասնագետների ներգրավմամբ՝ նշված հաս-

---

[1] www.csrs.ru

[2] http://www.azstat.org http://www.armstat.am

[3] Տե՛ս «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 23,05,2006:

տատություններում, ինչպես նաև ամբողջ երկրում նորարարական գործունեության առաջնահերթությունները սահմանելու և համակարգելու, կրթություն–գիտություն-արդյունաբերություն-գործարար ոլորտ կապն ապահովելու նպատակով:

- Զարկ տալ ինովացիոն ուղղվածությամբ գիտաժողովների, միջգիտակարգային գիտահետազոտական աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպմանը՝ ներգրավելով ինչպես հայաստանցի, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների, մասնագետների և հատկապես ինովացիոն տեխնոլոգիաներով զբաղվող ձեռնարկությունների ներկայացուցիչների: Նման միջոցառումները կարևորվում են թե՛ փորձի փոխանակման, թե՛ նորարարական հետազոտությունների պատշաճ քննարկման, ներկայացման և դրանց հրապարակայնացման ու հասանելիության առումով:
- Ստեղծել «ուղեղային կենտրոններ» (think tank), որոնց հիմնական նպատակը կհանդիսանան գիտատեխնիկական, տեխնոլոգիական և ինովացիոն խնդիրներում ՀՀ Կառավարությանը մասնագիտական և փորձագիտական տեղեկատվությունը, խորհրդատվությունը, վերլուծությունների տրամադրումը, բնագավառը խթանող օրենսդրության, ինովացիոն քաղաքականության ձևավորման և պետական մակարդակի որոշումների ընդունմանն աջակցումը:
- ՀՀ կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ընդգրկել ինովացիայի էությունը և կարևորությունը բացահայտող, գործընթացը և արդյունքների առևտրայնացման կառուցակարգերն ուսումնասիրող առարկաներ: Ապահովել ինովացիոն բնույթի աշխատանքների, ծրագրերի, նախագծերի, դրանց շրջանակներում ձեռք բերված արդյունքների և նվաճումների մասին տեղեկությունների ու նյութերի օգտագործումն ուսումնական գործընթացում:
- Ձևավորել նորարարության բնագավառում հաջողությունների հասած հետազոտողների, ձեռներեցների, ուսանողների և աշակերտների ճանաչման, դրվատման և հնարավորության դեպքում՝ պարգևատրման ծրագրեր ու կառուցակարգեր՝ հստակ ազդակներ հաղորդելով առ այն, որ ինովացիան խրախուսվում և բարձր է գնահատվում Հայաստանում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման առումով Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակը լավ օրինակ է[1]:

Արդի պայմաններում ինովացիան լավագույն փորձով ապացուցված այն ռազմավարական գործընթացն է, որը մտավոր ռեսուրսները փոխակերպում է տնտեսական արդյունքի: Մեր երկրում ինովացիոն դաշտը կարգավորվում է իրավաօրենսդրական նորմերով, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» օրենքով: [2] Այս օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեության պետական աջակցության ձևերը:

---

[1] Ինովացիայի խթանման գործիքների վերաբերյալ դիտարկումները վերցված են http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15532 կայքից:

[2] Տե՛ս World Development Indicators. States and Markets. 5.13. World Development Indicators: Science and technology. http://wdi.worldbank.org/table/5.13:

Տնտեսության զարգացման ինովացիոն ուղին ընտրած յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ ՀՀ-ն, պետք է հատուկ ուշադրություն դարձնի ինովացիոն գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների արտադրատնտեսական գործունեության հարկման օպտիմալ մոդելի մշակման խնդրին, քանի որ տնտեսավարող սուբյեկտների՝ ինովացիոն գործունեության նկատմամբ ունեցած հակվածությունը բավականին զգայուն է հարկման դրույքաչափերի նկատմամբ: Մեր երկրի եթե ոչ առաջնային, ապա արտահանման գլխավոր խնդիրը համարվում է շրջափակումը, այդ է պատճառը, որ կառավարությունը վերջին ժամանակներում իրականացնում է նորարարական գործունեությանն ուղղված խթանող միջոցառումներ, քանի որ ներկա պահին մեր երկրի տնտեսության համար կարող է առաջնային դառնալ ինովացիոն ոլորտը, որտեղ ստեղծված բարիքները, մրցունակ լինելու պարագայում, հեշտությամբ իրացվում են արտասահմանյան շուկայում: Ոլորտի զարգացումն այնքանով է անհրաժեշտ մեր երկրին, որքանով այն մեծ արտադրական ռեսուրսների ներգրավում չի պահանջում, իսկ արտադրված բարիքների փո-խանակումը կապված չէ մեծ տրանսպորտային ծախսերի հետ: Համաշխար-հային բանկի կողմից հաստատված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր երկրի արտահանման ընդհանուր կառուցվածքում բարձր տեխնոլոգիական արտադրանքի բաժինը կազմում է ընդամենը 2%:[1]

Ուսումնասիրելով ՀՀ Ազգային ինովացիոն համակարգի (ԱԻՀ) ձևավորման սահմանափակումները՝ կարծում ենք, որ նպատակահարմար է ոլորտի զարգացումը բաժանել 2 հաջորդող փուլերի՝

- Առաջին փուլում, երբ ԱԻՀ-ի հիմքը կազմող այնպիսի կառուցվածքային բաղադրիչներ, ինչպիսիք են ինովացիոն ենթակառուցվածքները, վենչուրային հիմնադրամները, գիտատեխնիկական գործունեության արդյունքների շուկան և ինովացիոն շուկան, դեռևս գտնվում են ձևավորման և կայունացման շրջանում, անհրաժեշտ է վերջիներիս կողմից իրականացվող մարքեթինգային, միջնորդական, տեղեկատվական, խորհրդատվական, իրավաբանական, ապահովագրական և այլ գործառույթները փոխանցել այդ նպատակով ստեղծված կառավարության մարմիններին:
- Երկրորդը միջոցառումների ուղղվածության ու պետության կողմից կիրառվող ռազմավարության փուլն է: Նկատենք, որ այս շրջանում ԱԻՀ-ի առանձին կառուցվածքային տարրերի ստեղծման ուղղությամբ պետական միջոցառումներն աստիճանաբար իրենց տեղը պետք է զիջեն այդ տարրերի ինքնակազմակերպման աջակցմանը, իսկ պետության ուղղակի ազդեցության և ակտիվ միջամտության ռազմավարությունն աստիճանաբար պետք է վերափոխվի առավելապես անուղղակի ազդեցության և ապակենտրոնացված կարգավորման ռազմավարության:

Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականից անդամակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը, իսկ 1995-ից՝ Եվրոպական արտոնագրային կազմակերպությանը: Արդեն 2005 թվականից սկսած՝ ՀՀ Կառավարությունը մշակեց մտավոր սեփականության պետական կարգավորման հայեցակարգը, որը սահմանեց պետական ռազմավարությունն ու քաղաքականությունն այս ոլորտում, ինչը պիտի մեծացնի

[1] Տե՛ս Создание институциональных основ рыночной экономики, Доклад о мировом развитии 2002. Всемирный банк, с. 238:

ինովացիոն ոլորտի դերը մեր տնտեսության մեջ, եթե դրանց համապատասխան ստեղծվի նաև կիրառման կառուցակարգ: Մեր երկրում ինովացիոն գործարարությունը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

- սեփական դրամական միջոցների անբավարարությունը,
- պետության կողմից ֆինանսական աջակցության անբավարարությունը,
- նոր արտադրանքի նկատմամբ ցածր վճարունակ պահանջարկը ու տեխնոլոգիաների շուկայի թույլ զարգացածությունը,
- բարձր տնտեսական ռիսկը,
- ինովացիոն ենթակառուցվածքների թույլ զարգացածությունը,
- որակավորված անձնակազմի անբավարարությունը:

Ընդհանուր առմամբ, հարկ ենք համարում նշել, որ գործոնների բաժանումը խոչընդոտողի և խթանողի, պայմանական է, քանի որ դրանք ժամանակի տվյալ պահին կարող են արգելակել, իսկ մեկ այլ դեպքում՝ խթանել ինովացիոն գործունեությունը:

Վերջում հավելենք, որ ՀՀ-ում մշակվել է ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ՝ 2010-2020 թթ. համար: Այդ փաստաթուղթը ներկայացնում է ՀՀ Կառավարության մոտեցումները՝ ի դեմս ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանում ինովացիոն խթանման և ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգի: Այն ենթադրում է հիմնախնդիրների առավել խորքային ուսումնասիրություն և սոցիալ-տնտեսական հարակից ոլորտների, մասնավորապես՝ գիտակրթական, հարկաբյուջետային, արդյունաբերական և արտահանման, խրախուսման քաղաքականության միասնացում մեկ ամբողջական համակարգում:

Արագընթաց գլոբալացումը և տեխնոլոգիական առաջընթացն անհրաժեշտություն են դարձնում ռազմավարական պարբերական վերանայումը և համապատասխանեցումը արտաքին և ներքին միջավայրերի փոփոխված պահանջներին: Ընդհանուր առմամբ, նպատակահարմար է, որ մեր երկրում պետական ինովացիոն քաղաքականությունը կողմնորոշվի հետևյալ հիմնախնդիրների իրականացմանը՝

- ազգային տնտեսության տեխնոլոգիական հիմքի կատարելագործում և վերազինում,
- տնտեսավարող սուբյեկտների ինովացիոն ակտիվության բարձրացում,
- ինովացիոն ձեռնարկատիրության շահերի պաշտպանություն:

Իսկ այս ամենի համար անհրաժեշտ են նաև մասնավոր ներդրումներ, ինչը մեր երկրում բավականին ցածր մակարդակի վրա է, անգամ վիճակագրությունն է բացակայում: ՀՀ-ում գիտության վրա կատարվող ծախսերի 25%-ը կազմում են դրամաշնորհները, իսկ 75-ը պետական ֆինանսավորումն է: Բացի ներդրումներց, անհրաժեշտ է նաև դրանց իրացման կառուցակարգի ճիշտ ընտրություն:

АННА МАТИНЯН

ВОПРОС ПРОДВИЖЕНИЯ ПО ИННОВАЦИЙ В РА

Ключевые слова: *инновационная деятельность, прогресс, экономический рост, конкурентная национальная инновационная система.*

В статье описывается инновационная система РА. Совершилос отрожение на научных сферах нашей страны, были предсталение все условия, при наличе которых иновация быдет фактором экономического роста РА.Возбудались также причины, для чего нужно ставить акцент именно на развитие этой отрасли. Была сделали выводы, и даны предложения для обеспечивания прогресса и дальнейшего развитя сферы.

ANNA MATINYAN

THE ISSUE OF INNOVATION PROMOTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *innovation aqctivity, progress, economic growth, competitive national innovation system.*

The innovation system of Armenia is described in the article .The reference is made to the sphere of science of our country. All conditions have been introduced, in case of availability, innovation wiIl become the factor of the economic growth of the Republic of Armenia.There are also reasons why the emphasis should be on the development of that branch.Conclusions have been done to provide the progress and further development of the sector.

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ,
3-րդ կուրս

ԹՈՐՍԹԵՅՆ ՎԵԲԼԵՆԻ ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *բիզնես, ինդուստրիա, մրցակցություն, ձեռնարկատիրություն, շահույթ, աշխատավարձ, պարապ խավ*

Հոդվածում քննարկվել են ինստիտուցիոնալիզմի հիմնադիր Թորսթեյն Վեբլենի ինդուստրիայի և բիզնեսի հարաբերակցության համադրույթը ու դրա արդիական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Ըստ Վեբլենի՝ բիզնեսի ներկայացուցիչները ձգտում են սեփականության, եկամուտների տիրապետման ու հանդես են բերում ցուցադրական սպառման վարքագիծ, առաջնորդվում են եսասիրական մղումներով և գիշատչական վարքագծով: Մինչդեռ, ինդուստրիայի ներկայացուցիչները հակված են ալտրուիստական վարքագծին ու արտադրության զարգացման պտուղները ամբողջ հասարակության շահերին ծառայեցնելուն: